

1949 թվականին այժմյան Երկրորդ արտոադրամասի տարածքում, հիմնադրվել է շշերի փոքրիկ արտադրամաս: Հիմնադիրն է եղել Գրիգորյանը: Պատրաստվել են ապակե տարաներ (փչման մեթոդով): 1952 թվականին №2 արտադրամասում տեղադրվել են գերմանական մեքենաներ, 1964-ից սկսվել է Բյուրեղապակու գործարանի շինարարությունը, որը շահագործման է հանձնվել 1968-ին: 1971 թվականից սկսվել է №3 արտադրամասի շինարարությունը, որը շահագործման է հանձնվել 1974 թվականին: 1967-ին ընդարձակվելով մեծացել է արտադրության ծավալները և վերանվանվել «Արզնու ապակե տարաների գործարան» տնօրեն՝ Կարապետյան: Այնուհետև անվանափոխվել է «Հայբյուրեղապակի» գործարանի: 1975 թվականից 2001-ը կոչվել է «Հայ ապակի» արտադրական միավորում, որը ֆիլիալներ է ունեցել Հոկտեմբերյան քաղաքում (շշերի արտադրություն) և Սպիտակ քաղաքում (բյուրեղապակու արտադրություն):

Մինչև 1974 թվականը տնօրեն է եղել Թոքմաջյանը:

1974 թվականից մինչև 1984-ը՝ Հ. Արոյանը

1984 թվականից մինչև 1990-ը՝ Հ. Հովհաննիսյանը

1990 թվականից մինչև 1995-ը՝ Ս. Եղիազարյանը

1991 թվականին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսվեց հումքի մատակարարման

դժվարությունը և 1995 թվականից գործարանը չի աշխատել և անցել է

սեփականաշնորհման կոմիտեի տրամադրության տակ:

1970-ից 80-ական թվականներին հատկապես «Հայապակի» գործարանի համար եղան

բուռն զարգացման, աշխատանքային հաջողությունների, արտադրական վերելքի

տասնամյակներ: Արտադրվում էր 2 մլն ռուբլու բյուրեղապակի: Գործել են 22

արտադրամասեր: Մասնաճյուղեր է ունեցել Մեծ Պառնիում, Հոկտեմբերյանում,

Լենինականում: Աշխատողների թիվը հասնում էր մինչև 3500-ի: Բյուրեղավան քաղաքի

պարծանքը հանդիսացաղ գործարանը արժանի համբավ ձեռք բերեց Խորհրդային

Միությունում: Այն խոշորագույնն էր Անդրկովկասում: Այստեղ արտադրվում էր շուրջ 4

տասնյակ տեսակի բյուրեղապակյա իրեր: Գործարանը բազմիցս հաղթող է ճանաչվել

անձայրածիր երկրի առաջատար ձեռնարկությունների միջև տարվող աշխատանքային

գործունեության մրցույթներում: Դա գործարանի ողջ կոլեկտիվի քրտնաջան և անմնացորդ

աշխատանքի արդյունքն էր: Գործին նվիրված աշխատում էին շարքային բանվորները և

արտադրության ղեկավարները: Այստեղ արտադրված ջահերը զարդարել են շատ ու շատ

նշանավոր կառույցներ, ինչպիսիք են Էջմիածնի Մայր տաճարը, Երևանի Ալ. Սպենդարյանի

անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը, Երևանի

մետրոպոլիտենը, Խնկո-Ապր անվան հանրապետական մանկական գրադարանը: Քաջ

գիտակցելով գիտության առաջատար նվաճումների և աշխատանքի արդյունավետության

նորագույն եղանակների կարևորությունը՝ գործարանի ղեկավարությունը՝ տնօրեն Հ.

Հարոյանի գլխավորությամբ, աշխատելու հրավիրեց ապակու տեխնոլոգիայի հմուտ

մասնագետ, տեխնիկական գիտությունների թեկնածու Լաուրա Մելիքսեթյանին՝

գործարանում գիտատեխնիկական լաբարատորիա հիմնելու և ղեկավարելու համար: Մեկը

մյուսի հետևից Լաուրա Մելիքսեթյանի կողմից ստեղծվեցին նորանոր բովախառնուրդների

բաղադրատեսակներ՝ քիչ կապարով կամ առանց կապարի բյուրեղապակիներ, տեղական

հումքի (Արագածի պեռլիտ, Արարատի կրաքար) ներկրվող թանկարժեք հումքատեսակների

փոխարինում: Գործարանի առաջընթացը, արտադրական որակի բարձրացումը, տեսականու ընդլայնումը, տնտեսական ցուցանիշների շոշափելի բարելավումը հայտնի դարձան հանրապետության և Միության սահմաններից դուրս գտնվող մասնագետներին և գործարարներին: Լաուրա Մելիքսեթյանի կողմից ստեղծված և ներդրված հայտնագործությունները արտոնագրվեցին ԱՄՆ-ում, Իտալիայում, Գերմանիայում, Հունաստանում: Հետևեցին արտասահմանից մասնագիտական խմբերի այցելությունները գործարան՝ ծանոթանալու նորագույն նվաճումներին՝ փորձի ձեռքբերման նպատակով: Գործարանը Բյուրեղավանի բնակիչների համար կառուցել է 14 բնակելի շենք, 2 հանրակացարան, 1 մանկապարտեզ, 2 շենք կառուցել է ջրերի գործարանի հետ համատեղ: 1991 թվականին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսվեց հումքի մատակարարման դժվարությունը և 1995 թվականից գործարանը չի աշխատել և անցել է սեփականաշնորհման կոմիտեի տրամադրության տակ: 2004 թվականից գործարանը վաճառվել է և նոր սեփականատերերը սկսել են այն գործարկել: 2006-ի մայիսին գործարանը նորից սկսել է ապակե տարաների արտադրությունը: Այսպիսով 2004 թվականին՝ հայտնի Արզնու բյուրեղապակու գործարանի հիմքի վրա, որը ժամանակի ընթացքում իր հմուտ վարպետների փորձառության, ջանադիր աշխատանքի շնորհիվ իր համբավն էր հուչակել աշխարհով մեկ, հիմնադրվեց «Գլաս Ռիորլդ Քամփնի» ՓԲԸ ընկերությունը: ՀՀ տարածքում ապակե տարաների արտադրական ձեռնարկություն հիմնելու որոշման օրվանից «Գլաս Ռիորլդ Քամփնի» ՓԲԸ ընկերությունը, պահպանելով ապակու արտադրության բոլոր կանոններն ու ստանդարտները հասել է մեծ ձեռքբերումների. այդ են վկայում ընկերության ISO9001:2000 Ապակե տարաների արտադրության և գունավոր տպագրության, ISO22000;2005 Սննդի ապահովման և կառավարման վկայականները, «Միջազգային Առևտրային Հեղինակություն» մրցանակը 2009 թվականին: Այժմ գործարանը վերանորոգված և զինված է արտադրական կազմակերպման համար անհրաժեշտ բարձրորակ սարքավորումներով, որոնք ձեռք են բերվել եվրոպական առաջատար ընկերություններից, ինչպիսիք են՝ "Glass Technologies" (Իտալիա), "BDF Boscato –Dala Fontana" (Իտալիա), "Saint Gobain SERP GROUPE" (Ֆրանսիա), "Fermac" (Իտալիա): Այս ամենի համար կատարվել են հսկայական ներդրումներ, ինչի արդյունքում ընկերությունն այսօր ունի ապակե տարաների արտադրման 3 հոսքագիծ, որն ընդհանուր հաշվով տարեկան տալիս է 120մլն հատ արտադրանք: Ողջ արտադրական պրոցեսն իրականացվում և հսկվում է ավտոմատ համակարգով: Բացի այդ ընկերությունն առաջարկում – կատարում է բարձրորակ գունավոր տպագրություն ապակե հարթ մակերեսի վրա՝ օգտագործելով միանգամից 6 գույն: «Գլաս Ռիորլդ Քամփնի» ՓԲԸ ընկերությունը այժմ ունի 322 աշխատող, տարեկան մոտ. 800 միլիոն եկամուտ, արտադրանքն արտահանում է արտերկրեր՝ մասնավորապես Վրաստան:

{jcomments off}